ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **28/04/2021**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էին՝ Հայկ Ալեքսանյանը, Վահե Ամիրխանյանը, Արման Գրիգորյանը, Արթուր Հարությունյանը, Էդգար Հովհաննիսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Գոռ Մելիքսեթյանը, Տիգրան Ղազարյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Վահագն Գևորգյանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Արուսյակ Առաքելյանը

Լսեցին
2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 04 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել 2021 թվականի ապրիլի 28-ի N 04 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Համայնքային մայթերի հիմնանորոգում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին.

2) Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով ««Աբովյանի N 5 մանկապարտեզ» և «Աբովյանի N 9 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների մասնաշենքերի պատուհանների և դռների փոխարինում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին.

3) Աբովյան քաղաքում գտնվող 07-002-0048-0157 կադաստրային ծածկագրով

հողամասի նպատակային նշանակությունը փոխված համարելու մասին.

4) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՅԹԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՌ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Համայնքային մայթերի հիմնանորոգում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին (հայտը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ««ԱԲՈՎՅԱՆԻ N 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ԵՎ «ԱԲՈՎՅԱՆԻ N 9 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԵՎ ԴՌՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՌ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով ««Աբովյանի N 5 մանկապարտեզ» և «Աբովյանի N 9 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների մասնաշենքերի պատուհանների և դռների փոխարինում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին (հայտը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-002-0048-0157 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի 5-րդ ենթակետի, 7-րդ հոդվածի 8-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, հիմք ընդունելով Մարիետա Մխիթարյանի հայտը (մուտք՝ 2021 թվականի ապրիլի 23-ի N Ք-986), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսություն կառուցելու նպատակով՝ Մարիետա Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2019 թվականի մարտի 6-ի N 06032019-07-0107 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 07-002-0048-0157) 3.00166 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասից 2482.29 քառակուսի մետր մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը համարել փոխված որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամաս (հատակագիծը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարիետա Մխիթարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2021 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22-Ա/

Ավագանու անդամներ

ՆԻԿՈԼԱՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱՅԱՆ

ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԼԵՎՈՆ ԺԱՄՀԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԳՈՌ ՂԱԼԵՉՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՆԱՐԻՆՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՉԱՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Արուսյակ Առաքելյանը